ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթղթերի տպագրական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15-4-16/01» շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 18 ապրիլի 2016թ.

Սույն թվականի ապրիլի 18-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար հատուկ պաշտպանվածություն պահանջող փաստաթղթերի տպագրական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՇՁԲ-15-4-16/01» շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հանձնաժողովի անդամներ՝ Ս. Գ. Ամիրխանյանը, Թ. Ա. Ասոյան, Հ. Գ. Ղաջոյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտ պարունակող ծրար է ներկայացրել «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ (ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված, Ս. Սաֆարյան փողոց 11/1ա) կազմակերպությունը:

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/4 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 19 կազմակերպություններ:

Հանձնաժողովը գնահատեց.

1) «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում,
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
   - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
   - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
   - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին,
   - գնի առաջարկ:

   Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ յոթ էջից:

Գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբաժինը	Գնման առարկայի անվանումը	«Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ
1	Պետական նմուշի դիպլոմի տպագրություն	1.109.333,33 /մեկ միլիոն մեկ հարյուր ինը հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա/

2) Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել:

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ ենթակետի և 30-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին:
- ✓ Ընթացակարգի մասնակցին տեղեկացնել որոշման մասին:
- ✓ «Ոսկան Երևանցի» տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին առաջարկել հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- ✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
  - ✓ Անգործության ժամկետ չի սահմանվում:
- ✓ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում կատարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և դրական եզրակացություն ստանալու դեպքում պայմանագիր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պայմանագրի նախագծի հաստատումից և պայմանագրի ապահովում ներկայացնելուց հետո:

հանձանաժողովի նախագահ՝		Ն. Ա. Կուտուզյան
հանձանաժողովի անդամ՝		Ս. Գ. Ամիրխանյան
հանձանաժողովի անդամ՝		Թ. Ա. Ասոյան
հանձանաժողովի անդամ՝		Հ. Գ. Ղաջոյան
հանձանաժողովի քարտուղար՝		Ս. Բ. Ղարաբաղցյան